

**«ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**2009 Թ. ՄԱՐՏԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՐԵՔ ԱՄԻՄՆԵՐԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Երևան, Ամիրյան 27, թիվ 14

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ձև 5)

1. Ընդհանուր դրույթներ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Իկապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որը ստեղծվել է 2005թ.:

2007 թվականի օգոստոսին Ընկերությունը վերանվանվել է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության:

2006թ. նոյեմբերի 23-ին Ընկերությունը ստացել է բրոքերային գործունեության և հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիաներ, իսկ 2007 թվականի հոկտեմբերին ստացել է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա:

2008թ. հունիսի 27-ին ընկերությունը վերագրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել թիվ 6 լիցենզիան:

Ընկերությունն ունի երկու բաժնետեր՝ Տիգրան Կարապետյան (66.67%) և Արմեն Սկոյան (33.33%):

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ղեկավար մարմիններն են հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովը և գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Տիգրան Կարապետյանը:

Ընկերությունը մինչ այժմ գործունեություն է իրականացրել արժեթղթերի և արտարժույթի շուկաներում՝ մասնավորապես

- իրականացրել է արժեթղթերի տեղաբաշխում,
- մատուցել է արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայություններ,
- հանդիսացել է արժեթղթերի բրոքեր և դիլեր,
- մատուցել է ռեեստրավարման և պահառության ծառայություններ,
- տրամադրել է խորհրդատվություն արժեթղթերի շուկայի վերաբերյալ,
- իրականացրել է արտարժույթի անկանխիկ առուվաճառքի գործառնություններ:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և Պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներին (ՀՀՀՀՍ) և ընկերության խորհրդի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան: Կիրառվել է նույն քաղաքականությունը, ինչ որ ամենավերջին տարեկան հաշվետվություններում:

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2009թ. մայիսի 14-ին:

2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

2.3 Հաշվետվական արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

1. Հիմնական միջոցների հետագա չափման մոտեցումները՝ սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստը:

2. Ոչ նյութական ակտիվների հետագա չափման հիմունքները՝ սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստը:

3. Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումները՝ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

4. Ծառայությունների մատուցման պայմանագրերի գծով հասույթի ճանաչման համար գործարքի ավարտվածության աստիճանի որոշման մոտեցումը՝ երբ ծառայության մատուցման գործարքի արդյունքները հնարավոր է արժանահավատորել գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա, հակառակ դեպքում հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

5. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

6. Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

7. Առևտրական նպատակներով պահվող (ԱՆՊ) ֆինանսական ակտիվներ՝ ԱՆՊ ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ամսի վերջին օրվա դրությամբ վերաչափվում են իրական արժեքով՝ իրական արժեքից առաջացող շահույթները (վնասները) ճանաչելով տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (ՖԱՄՀ)՝ որպես այլ գործառնական եկամուտ կամ այլ գործառնական ծախս: ԱՆՊ ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում դրանց վաճառքից ստացվող (ստացվելիք) գումարը ներկայացվում է ՖԱՄՀ-ում որպես հասույթ, իսկ վաճառված ԱՆՊ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը (ներառյալ՝ իրական արժեքով ճշտումները) ՖԱՄՀ-ում ներկայացվում է որպես վաճառքի ինքնարժեք:

8. ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ՖԱՄՀ-ում և ներկայացվում այլ գործառնական եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները

հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ՖԱՄՀ-ում և ներկայացվում այլ գործառնական ծախսերի կազմում:

9. Արտարժույթի առք-վաճառքի եկամուտներ և ծախսեր՝ արտարժույթի առք-վաճառքի գործառնություններից ստացված զուտ շահույթը (վնասը) ներկայացվում է որպես այլ գործառնական շահույթ (ծախս):

10. Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամուտից): Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն գործարքների գծով առաջացած հարկի, որոնց արդյունքները ուղղակիորեն ճանաչվում է են սեփական կապիտալում: Վերջին դեպքում շահութահարկի գծով ծախսը նույնպես ճանաչվում է սեփական կապիտալում Ընթացիկ հարկի գծով ծախսը ընթացիկ տարվա հաշվվող շահույթից վճարման ենթակա շահութահարկն է և նախորդ տարիների ընթացիկ հարկի ճշգրտումներ: Հետաձգված հարկի գծով ծախսը (եկամուտը) հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մնացորդների փոփոխություններ արդյունքն է: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են, այնքանով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում բավարար հարկվող շահույթի ստացումը, որի հաշվին կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնասները:

Ծանոթագրություն 3. «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից	8	
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	8,280	952
Տոկոսային եկամուտներ տրված վարկերից (փոխառություններից)	8	
Ընդամենը	8,296	952

Տոկոսային և նմանատիպ ծախսեր

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(925)	
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով	(5,111)	(386)
Ընդամենը	(6,036)	(386)
<u>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ</u>	2,260	566

Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով
միջնորդավճարներից
Խորհրդատվական ծառայությունների գծով
միջնորդավճարներից
Պահառության գործունեությունից
Ընդամենը

Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
32	-
100	-
601	-
733	-

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

Միջնորդավճարների գծով ծախսեր
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ

Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
(252)	(126)
481	(126)

Ծանոթագրություն 5. «Եկամուտ շահաբաժիններ»
Ընկերությունը շահաբաժնային եկամուտներ չունի:

Ծանոթագրություն 6. «Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից

Առևտրական նպատակներով պահվող ներդրումների
առք ու վաճառքից զուտ եկամուտ
Առևտրական նպատակներով պահվող ներդրումների
իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ
Ընդամենը

Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
38,0	555
(7,290)	2,257
(7,252)	2,812

Արտարժույթային գործառնություններից

Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ
եկամուտ
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ
եկամուտ
Ընդամենը
**Ընդամենը զուտ եկամուտ առևտրային
գործառնություններից**

Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
(326)	78
4,745	2
4,419	80
(2,833)	2,892

Ծանոթագրություն 7. «Այլ գործառնական եկամուտ»
Ընկերությունը այլ գործառնական եկամուտներ չունի:

Ծանոթագրություն 8. «Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»
 Ընկերությունը զուտ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ հաշվետու
 և նախորդ ժամանակաշրջաններում չի իրականացրել:

Ծանոթագրություն 9. «Ընդհանուր վարչական ծախսեր»

Ընդհանուր վարչական ծախսեր

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(3,414)	(2,257)
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով	(543)	(325)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(2,400)	-
Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(411)	-
Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(510)	(510)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(311)	(255)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(1,305)	-
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(518)	(200)
Ընդամենը	(9,412)	(3,547)

2009թ. 1-ին եռամսյակում միջին ամսական աշխատողների թիվը եղել է 11, իսկ մեկ աշխատողին բաժին
 ընկնող միջին աշխատավարձը՝ 104 հազ. դրամ (2008-ի նույն ժամանակաշրջանում՝ աշխատողների թիվը՝
 6 և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը՝ 119 հազ. դրամ):

Ծանոթագրություն 10. «Այլ գործառնական ծախսեր»

Այլ գործառնական ծախսեր

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(492)	(154)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(34)	(16)
Այլ ծախսեր	(9)	-
Ընդամենը	(535)	(169)

**Ծանոթագրություն 11. «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ
 շահույթ(վնաս)»**

«Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)» ընկերությունը չի
 ունեցել:

Ծանոթագրություն 12. «Շահութահարկի գծով ծախս»

Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի համար շահութահարկի գծով ծախսը գնահատված է ոչ էական
 և չի ճանաչված :

Ծանոթագրություն 13. «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ»

Ծանոթագրություն 13-ում բացահայտվում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկման (հաշվարկման բանաձևերում որպես համարիչ և հայտարար օգտագործվող գումարների) վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀՀՀՍ 33 «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ» ստանդարտի: Բացահայտումները ներկայացվում են նաև այն դեպքում, երբ բացահայտվող գումարները բացասական են (մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնաս):

<u>Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ</u>	<u>Հաշվետու ժամանակաշրջան</u>	<u>Նախորդ ժամանակաշրջան</u>
Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ հարկումից հետո	(10,039)	(384)
Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	-	-
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթ (վնաս)	(10,039)	(384)
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	15,000	15,000
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	(0.669)	(0.026)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	(0.669)	(0.026)

Ծանոթագրություն 14 «Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

14.1. «Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

<u>Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում</u>	<u>Հաշվետու ժամանակաշրջան</u>	<u>Նախորդ ժամանակաշրջան</u>
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	0.5	-

14.2. «Դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը»

	<u>Հաշվետու ժամանակաշրջան</u>	<u>Նախորդ ժամանակաշրջան</u>
Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում	1	-
Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում	14,828	5,193
	14,829	5,193

Ծանոթագրություն 15. «Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Ընթացիկ հաշիվներ

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ բանկերում	14,829	5,193
Ընդամենը	14,829	5,193
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8)	-	-
Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,829	5,193

Ծանոթագրություն 16. «Պահանջներ հաճախորդների նկատմամբ»

Ընկերությունը հաճախորդներին տրամադրված վարկեր կամ փոխառություններ չունի:

Ծանոթագրություն 17. «Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ»

Պետական արժեթղթեր

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝	206,666	415,036
գանձապետական պարտատոմսեր	206,666	415,036
Ընդամենը պետական արժեթղթեր	206,666	415,036
Այդ թվում՝ ՀՀ բաներին ռեպո համաձայնագրով վաճառված	206,666	412,919

ՀՀ ոչ պետական արժեթղթեր

	Հաշվետու ժամանակաշրջան		Նախորդ ժամանակաշրջան	
	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>	<i>ցուցակված</i>	<i>չցուցակված</i>
ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի				
երկարաժամկետ պարտքային գործիքներ	209,020		156,653	27,722
Ընդամենը ՀՀ ոչ պետական առևտրային նպատակով պահվող արժեթղթեր	209,020		156,653	27,722
Այդ թվում՝ ՀՀ քաղաքացուն ռեպո համաձայնագրով վաճառված	45,456		-	-
նդամենը առևտրական նպատակով պահվող արժեթղթեր	415,686		599,411	

Ծանոթագրություն 18. «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»

Ընկերությունը «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» չունի:

Ծանոթագրություն 19. «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»

Ընկերությունը «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ» չունի:

Ծանոթագրություն 20. «Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում»

Ընկերությունը «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ» չունի:

Ծանոթագրություն 21. «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	Համակ. և կապի միջոցներ	Այլ հիմն. միջոցներ	Ընդամենը
<u>Սկզբնական արժեք</u>			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	2,349	500	2,849
Ավելացում	1,989	5,306	7,295
Օտարում	-	(380)	(380)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	4,338	5,426	9,764
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	4,338	5,426	9,764
<u>Կուտակված մաշվածություն</u>			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	252	30	282
Ավելացում	534	225	759
Օտարում	-	(95)	(95)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	786	130	916
Ավելացում	215	277	492
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	1,001	407	1,408
<u>Զուտ հաշվեկշռային արժեք</u>			
հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3,337	5,019	8,356
նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3,552	5,296	8,848

Ոչ նյութական ակտիվներ

	Համա-կարգչա- յին ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	165	150	315
Ավելացում	-	370	370
Արժեզրկում	(33)	-	(33)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	165	520	685
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	165	520	685
Կուտակված ամորտիզացիա			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	8	3	11
Ավելացում	33	48	81
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	41	51	92
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	50	77	127
Զուտ հաշվեկշռային արժեք			
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում	115	443	558
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	124	469	593

Ծանոթագրություն 23. «Այլ ակտիվներ»

Գերիտորական պարտքեր և կանխավճարներ

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Գերիտորական պարտքեր բյուջեի գծով	13	32
Գերիտորական պարտքեր մատակարարների գծով	561	1,011
Կանխավճարներ աշխատակիցներին	2	2
Կանխավճարներ մատակարարներին	240	35
Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով	89	68
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	360	735
Ընդամենը	1,265	1,883
Այլ ակտիվներ		
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	12	25
Այլ ակտիվներ	575	282
Ընդամենը այլ ակտիվներ	587	307

Ծանոթագրություն 24. «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Ներգրավված փոխառություններ և ավանդներ, այլ ՀՀ բանկեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ավանդներ և փոխառություններ	41,000	41,000
ռեպո համաձայնագրեր	201,766	412,109
Հաշվեգրված տոկոսներ	152	891
Ընդամենը	242,918	454,000

Ծանոթագրություն 25. «Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ»

ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց նկատմամբ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ռեպո համաձայնագրեր	45,456	-
Հաշվարկված տոկոսներ	390,0	-
Ընդամենը	45,846	-
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	45,846	-

Ծանոթագրություն 26. «Առևտրական նպատակներով պահվող պարտավորություններ»

Ընկերությունը առևտրական նպատակներով պահվող պարտավորություններ չունի:

Ծանոթագրություն 27. «Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր»

Ընկերությունը թողարկված արժեթղթեր չունի:

Ծանոթագրություն 29. «Պահուստներ»

Ծանոթագրություն 29-ում բացահայտվում են հաշվետու ժամանակաշրջանում պահուստների շարժը.

Պահուստներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	1,193	80
Պահուստին կատարված մասհանումներ	-	1,113
Պահուստի օգտագործում	(196)	-
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(196)	1,113
Վերջնական մնացորդ	997	1,193
Ռիզո`Աուդիտի գծով	300	300
Արձակուրդայինի գծով	697	893

Երկու պահուստների գծով էլ ընկերությունն ունի իրավական պարտականություն: Դրանց արդյունքում դրամական հոսքերի արտահոսքերն ակնկալվում են տարվա ընթացքում և հաջորդ աուդիտի ժամանակ: Հաշվի առնելով կարճաժամկետ և ոչ էական լինելը, պահուստների գումարը որոշվել է առանց գեղջման:

Ընկերությունը պահուստավորում պահանջող այլ իրավական կամ կառուցողական պարտականություններ չունի: Ընկերության հանդեպ որևէ իրավական հայց հարուցված չկա: Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

Ծանոթագրություն 30. «Այլ պարտավորություններ»

Այլ պարտավորություններ

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով՝		
ԱԱՀ-ի գծով	267	
այլ հարկերի ու տուրքերի գծով	83	131
սոցիալական ապահովագրության վճարումների գծով	197	
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	429	792
Այլ պարտավորություններ	517	51
Մնացորդը ժամանակաշրջանի վերջում	1,493	974

Ծանոթագրություն 31. «Կանոնադրական կապիտալ»

Ընկերության կանոնադրական կապիտալը 150,000 հադ. ՀՀ դրամ է, որը կազմում է 15,000 (տասնհինգ հազար) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 30,000(երեսուն հազար) հատ բաժնետոմս:

Ընկերության հայտարարած արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 3,000 (երեք հազար) հատ բաժնետոմս: Արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ է:

Նշանակալից մասնակցի անունը, ազգանունը/անվանումը	Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության գումարը	Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ
Արմեն Մկոյան	50,000	33,3%
Տիգրան Կարապետյան	98,700	65,8%

Ծանոթագրություն 35. «Կապիտալի այլ տարրեր»

Կապիտալի այլ՝ չբացահայտված տարրեր չկան:

Ծանոթագրություն 36. «Գործարքներ կապակցված կողմերի հետ»

Կազմակերպության փոխկապակցված կողմ է հանդիսանում «Էլիտ Գ-րուպ» ՓԲԸ-ն, որի բաժնետերերը հանդիսանում է նաև Կազմակերպության բաժնետեր: «Էլիտ Գ-րուպ» ՓԲԸ-ի հետ եռամսյակի ընթացքում կատարվել են հետևյալ գործարքները.

- «Էլիտ Գ-րուպ» ՓԲԸ-ին մատուցվել է ռեեստրավարման ծառայություն՝ ամսական 2400 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ-ն),
- «Էլիտ Գ-րուպ» ՓԲԸ-ի հետ կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ ամսական 960000 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ-ն), համաձայն որի Կազմակերպությունը Ամիրյան 27/14 հասցեում վարձակալել է գրասենյակային տարածք,
- 2008թ.-ի դեկտեմբերին Արմեն Սկոյանի հետ կնքվել է արժեթղթերի հավատարմագրային կառավարման պայմանագիր, համաձայն որի՝ վերջինս Ընկերության կառավարմանն է հանձնել 473,175 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով «Էլիտ Գ-րուպ» ՓԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսեր:

Ծանոթագրություն 37. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»

37.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի (ակտիվների) կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով ընկերությունը կկրի ֆինանսական կորուստներ:

Պարտքային ռիսկի վերլուծություն

Հաշվետու ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	1		1
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	14,828		14,828
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	415,686		415,686
Ընդամենը ակտիվներ	430,515		430,515
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	242,918		242,918
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	45,846		45,846
Ընդամենը պարտավորություններ	288,764		288,764
Չուտ դիրք	141,751		141,751

Նախորդ ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	ՀՀ	Այլ երկրներ	Ընդամենը
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	6,093		6,093
Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	599,411		599,411
Ընդամենը ակտիվներ	605,504		605,504
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	454,000		454,000
Ընդամենը պարտավորություններ	454,000		454,000
Զուտ դիրք	151,504		151,504

37.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես, առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքների ապագա իրական արժեքների փոփոխությամբ ընկերությունը կկրի վնասներ:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է առավելագույնս նվազագույնի հասցնել անորոշության դաշտը, որը հնարավորություն կտա կրճատել ռիսկին ենթարկվածության աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկայնության տվյալ մակարդակի հիմնավորվածությունը:

37.3 Արտարժույթի ռիսկ

Ընկերությունը գրեթե չունի արտարժույթային ակտիվներ և պարտավորություններ և ըստ էության ենթարկված չէ արտարժույթային ռիսկին:

Հաշվետու ժամանակաշրջան.

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	1		1
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	14,728	100	14,828
Առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	415,686		415,686
Ընդամենը ակտիվներ	430,415	100	430,515
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	242,918		242,918
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	45,846		45,846
Ընդամենը պարտավորություններ	288,764		288,764
Զուտ դիրք	141,651	100	141,751

Նախորդ հաշվետու ժամանակաշրջան.

Հոդվածի անվանումը	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում			
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	6,005	88	6,093
Առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքներ	599,411		599,411
<i>Ընդամենը ակտիվներ</i>	605,416	88	605,504
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	454,000		454,000
<i>Ընդամենը պարտավորություններ</i>	454,000		454,000
Զուտ դիրք	151,416	88	151,504

37.4.Տոկոսադրույքի ռիսկ *Հաշվետու ժամանակաշրջան*

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով
Տեղաբաշխված միջոցներ								
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում՝			49,310		114,253		206,667	
- երկարաժամկետ պարտք. գործիքներ			49,310		114,253		206,667	
Ընդամենը	-	-	49,310	-	114,253	-	206,667	
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝	249,918		-	-	-	-	-	-
- վարկեր	41,152		-	-	-	-	-	-
- ռեպո համաձայնագրեր	201,766		-	-	-	-	-	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝	45,846		-	-	-	-	-	-
- ռեպո համաձայնագրեր	45,846		-	-	-	-	-	-
Ընդամենը	288,764		-	-	-	-	-	-
Զուտ դիրք	(288,764)		49,310	-	114,253	-	206,667	-

Նախորդ ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով	դրամով	արտարժույթով
Տեղաբաշխված միջոցներ						
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում՝			184,375		368,822	
- երկարաժամկետ պարտք. գործիքներ			184,375		368,822	
Ընդամենը	-	-	184,375	-	368,822	
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝	454,000			-		-
- վարկեր	41,504			-		-
- ռեպո համաձայնագրեր	412,496			-		-
Ներգրաված այլ միջոցներ						
Ընդամենը	454,000		-	-	-	-
Զուտ դիրք	(454,000)		184,375	-	368,822	-

Տոկոսային գործիքների միջին տոկոսադրույքը

Հոդվածի անվանումը	Հաշվեու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ		Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
Ակտիվներ				
Առևտրական նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր	10.25		10,3	
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	10		8.66	
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	9			

37.5 Գնային ռիսկ

Գնային ռիսկը ֆինանսական գործիքի շուկայական գնի փոփոխության հետևանքով կորուստ կրելու հավանականությունն է:

37.6.Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ ընկերությունը կարող է հանդիպել ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս:

Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, որը բնական է ֆինանսական հաստատությունների համար, ինչն էլ պայմանավորված է իրականացվող գործարքների տարբերություններով և դրանց հետ կապված անորոշությամբ:

Հաշվետու ժամանակաշրջան

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում						1	1
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ						14,828	14,828
Արժեթղթեր, այդ թվում՝ - առևտրական նպատակով պահվող				49,310	320,920	45,456	415,686
Ընդամենը				49,310	320,920	60,285	430,515

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	201,766	41,152					242,918
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	45,846						45,846
Պայմանագրային պարտավորություններ***	157,0	778,0					935,0
Ընդամենը	247,769	41,930					289,699

Նախորդ ժամանակաշրջան

ԱԿՏԻՎՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ						5,193	5,193
Արժեթղթեր, այդ թվում՝ - առևտրական նպատակով պահվող					599,411		599,411
Ընդամենը					599,411	5,193	604,604

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Մարմանը մնացել է					Անժամկետ	Ընդամենը
	մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի		
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	454,000						454,000
Պայմանագրային պարտավորություններ**	910,0						
Ընդամենը	454,910						454,910

* «Պայմանագրային պահանջներ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված (հաշվեկշռում կամ հետհաշվեկշռում չարտացոլված), սակայն պայմանագրով նախատեսված ստացվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

** «Պայմանագրային պարտավորություններ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված, սակայն պայմանագրով նախատեսված վճարվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

Ծանոթագրություն 38. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»

31/03/09 31/12/08

Կանոնադրական կապիտալ	150,000	150,000
Գլխավոր պահուստ	100,0	100,0
Վերագնահատման պահուստ	-	-
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	(10,039)	8,418
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ	8,418	
Ընդամենը	148,479	148,479

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12 փետրվարի 2008թ. թիվ 44-Ն որոշմամբ Ընկերության համար կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափ է սահմանված 100 մլն. դրամը: Ստորև ներկայացվում է Ընկերության փաստացի ընդհանուր կապիտալի միջին օրական մեծությունը ըստ ամիսների:

2008թ.

Ամիսը	Հիմնական կապիտալի Հաշվեկշռային մեծություն	Ընդամենը կապիտալ	Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ	Նորմատիվային հաշվարկին մասնակցող Հիմնական կապիտալ
Հունվար	149,917	149,917	156	149,761
Փետրվար	149,577	149,577	154	149,423
Մարտ	149,458	149,458	154	149,304

2009թ.

Ամիսը	Հիմնական կապիտալի Հաշվեկշռային մեծություն	Ընդամենը կապիտալ	Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ	Նորմատիվային հաշվարկին մասնակցող Հիմնական կապիտալ
Հունվար	157,873	157,873	9,998	147,875
Փետրվար	155,904	155,904	2,484	153,420
Մարտ	154,714	154,714	118	154.595

Ծանոթագրություն 39. «Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք»

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշում է շուկայական գնանշումների հիման վրա: Բոլոր ֆինանսական գործիքներն արտացոլված են իրական արժեքներով, բացառությամբ փոխառությունների և վարկերի, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրանց իրական արժեքը գնահատվում է հաշվեկշռային արժեքին մոտ :

Ծանոթագրություն 40 «Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում»

31.03.09 թ. դրությամբ կանխատեսվող ապագա գործարքներ առկա չեն եղել:

Ծանոթագրություն 41. «Ապաճանաչում»

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փոխանցված ակտիվի ամբողջությամբ կամ դրամի մասի ապաճանաչման չափանիշներին չբավարարման դեպք չի եղել:

Ծանոթագրություն 42. «Գրավադրված ակտիվներ»

31.03.09 թ. դրությամբ ընկերության ապահովված պարտավորությունների ընդհանուր գումարը կազմում է 41,000 հազ. ՀՀ դրամ, իսկ գրավադրված ակտիվների, որը իրենից ներկայացնում է հազար հատ «Վալլետտա» ՍՊԸ արժեկտրոնային պարտատոմս 50,0 հազ անվանական արժեքով և տարեկան 11 տոկոս եկամտաբերությամբ, հաշվեկշռային արժեքը կազմել է 44,249 հազ. ՀՀ դրամ: Գրավը տրամադրվել է համաձայն վարկային և գրավի պայմանագրերի:

Ծանոթագրություն 43. «Ընդունված գրավ»

Ընկերությունը 31.03.09 թ դրությամբ գրավով ապահովված ակտիվներ չի ունեցել:

Ծանոթագրություն 44. «Պարտավորությունների չկատարում/խախտում»

31.03.09 թ. դրությամբ ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում չի եղել: